

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐ

ԿՈՄՈԶԻՏՈՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

Ռեսպուբլիկայի հասարակայնությունը նշեց հայ դասական երաժշտության ականավոր դեմքերից մեկի՝ Ալեքսանդր Սպենդիարյանի մահվան 25-ամյակը։

Ռեսպուբլիկայի աշխատավորները մեծագույն սեր և հետաքրքրություն են ցուցաբերում երաժշտի հանճարեղ ստեղծագործությունների նկատմամբ։ Սպենդիարյանի կուլտուրական ժառանգությունը հայ դասական երաժշտության մեջ ունի գեղարվեստական, ինչպես և պատմական խոշոր արժեք։ Հենվելով ռուսական և արևմուտա-եվրոպական դասական երաժշտության առաջադիմական ստեղծագործական սկզբունքներով, օգտվելով ժողովրդական ստեղծագործության ակունքներից, նա մոտ 30 տարվա բեղմնավոր ստեղծագործությամբ հարստացրել է հայ դասական երաժշտության գանձարանը։ Սպենդիարյանը ստեղծել է երաժշտական տարբեր ժանրի բազմաթիվ մեծարժեք գործեր, ինչպիսիք են՝ «Երեք արմավենի», «Զրիմի էսքիզներ», «Էյուդ հրեական թեմաներով», «Երևանյան էյուդներ» սիմֆոնիկ երկերը, ռոմանսները, դաշնամուրային ստեղծագործությունները, լիրժեք և հոյակապ «Ալմաստ» օպերան և այլն։

Սպենդիարյանի հարուստ ստեղծագործության մեջ գլխավոր տեղ է գրավում նրա սիմֆոնիկ ժառանգությունը, որը ունի սքանչելի մելոդիականություն և անմիջականորեն ներգործող խորը հուզականություն։

Սպենդիարյանի երաժշտական ստեղծագործության մեջ ինքնուրույն տեղ է գրավում «Ալմաստ» օպերան, իր գաղափարական խորը ընդհանրացումներով, երաժշտական արվեստի բարձր կուլտուրայով, ռեալիստական ճշմարտությամբ և խորը ժողովրդայնությամբ։

Սպենդիարյանի երաժշտական ժառանգությունը բացառիկ տեղ ունի ոչ միայն հայ կլասիկ երաժշտության մեջ, այլև ողջ սովետական երաժշտության մեջ։ Կիրառելով ռեալիստական ստեղծագործական մեթոդը, Սպենդիարյանը ռուսական կլասիկ երաժշտության բարերար ազդեցությամբ հանդերձ ստեղծեց ազգային երաժշտական լեզվի և ոճի կերտման ինքնուրույն ճանապարհ։ Նա մեծ վարպետությամբ օգտագործել է ժողովրդական ստեղծագործությունները՝ հաղորդելով նրանց ուրույն բաղդրություն ու համ։

Մեծ են Սպենդիարյանի մատուցած ծառայությունները հայ դասական երաժշտության հարստացման ու զարգացման գործում, և հայ ժողովուրդը սրբությամբ է պահում մեծ երաժշտի հիշատակը։